54-ՐԴ ՆԻՍՏ

30 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, խնամատարության, արտաքին գործոց, լուսավորության և իրավարարության մինիստրները:

Մինիստր-նախագահ - Կարդում է կառավարության և պատգամավորության միջև փոխանակված հեռագիրները:

Ավելացրեց նա, որ այն, ինչ որ սրանից երկու շաբաթ առաջ խորհրդարանը ցանկանում էր խույս տալ արյունահեղությունից, իրականանում է և վաղը գիշերվա ժամը 12-ին, համաձայն դաշնակիցների կատեգորիկ պահանջի, պետք է դադարեն պատերազմական գործողությունները և կնքվի զինադադար: Չնայած մեր պահանջներն ամբողջությամբ չեն իրականանալու զինադադարի նախորոշված պայմաններով, այնուամենայնիվ, մենք համաձայն ենք և ուրախ, որովհետև վերջապես կանգ պիտի առնի թափվող արյունը:

Վ. Տեր-Թորոսյան - Զեկուցում է իրավարարության մինիստրության նախահաշվի մասին:

Խորհրդարանը հաստատում է նախահաշիվը և հանձնում խմբագրական հանձնաժողովին:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 17 հունվարի 1919թ.